

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի պլանի գներով Հավելյալ օգնություն ստանալը Միջոցների և եկամուտների սահմանները

2010



Սոցիալական ապահովության վարչությունը և Medicare-ի և Medicaid-ի ծառայությունների կենտրոնները համատեղ աշխատում են դեղատոմսով բաց թողնվող դեղերի Medicare-ի պլանների ծախսերի հետ կապված Հավելյալ օգնությունը ձեռք հասցնելու ուղղությամբ: Եթե դուք ունեք սահմանափակ միջոցներ և եկամուտ, ապա դուք կարող եք հնարավորություն ունենալ ստանալու Հավելյալ օգնություն, որպեսզի վճարեք ձեր ամսական ապահովագրավճարները, տարեկան պահումները և դեղատոմսով համավճարները՝ ըստ դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի պլանի: Որոշելու, թե արդյոք դուք բավարարում եք պահանջներին, Սոցիալական ապահովությանը անհրաժեշտ կլինի խմանալ ձեր խնայողությունների, ներդրումների և անշարժ գույքի (բացի ձեր տնից) և ձեր եկամուտի արժեքը: Եթե դուք ամուսնացած եք և ապրում եք ձեր կնոջ (ամուսնու) հետ, ապա մեզ պահանջվելու է տեղեկատվություն ձեր երկուսի մասին:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի պլանի գներով Հավելյալ օգնություն ստանալու դիմում-հայտարարագիր (Ձևաթուղթ SSA-1020) լրացնելը կօգնի Սոցիալական ապահովությանը որոշելու Հավելյալ օգնության համար ձեր իրավասու լինելը: Դիմում-հայտարարագրի հարցերից մեծ մասը առնչվում է միջոցների և եկամուտի հետ: Սոցիալական ապահովությունը սկզբնապես չեն պահանջվելու ձեր կողմից ներկայացվող տեղեկատվությունը հաստատող փաստաթղթերը, սակայն այն համեմատելու է ձեր տեղեկատվությունը Դաշնային այլ գործակալություններում մատչելի տվյալների հետ:

Ի՞նչ է միջոցների սահմանը:

Հավելյալ օգնության պահանջներին բավարարելու համար ձեր ընդհանուր միջոցները պետք է սահմանափակվեն \$12.510 դոլարով՝ անհատի համար (\$25.010 դոլարով՝ միասին ապրող ամուսնացած զույգի համար): Միջոցները ընդգրկում են ձեր սեփականությունը հանդիսացող իրերի արժեքը: Որոշակի օրինակներից են.

- Անշարժ գույքը (բացի ձեր առաջնային բնակարանից).
- Բանկային հաշիվները, ներառյալ ընթացիկ, խնայողական և ավանդային վկայագրերը.
- Բաժնետոմսերը.
- Պարտատոմսերը, ներառյալ ԱՄՆ խնայողական պարտատոմսերը.
- Փոխադարձ ֆոնդերը.
- Անհատական կենսաթոշակային հաշիվները (IRA-ներ). կամ
- Տանը կամ այլ վայրում պահվող կանխիկ դրամը:

Ի՞նչը՞ հաշվի չի առնվում որպես միջոց:

Սոցիալական ապահովությունը հաշվի չի առնում.

- Ձեր առաջնային բնակարանը.
- Ձեր անձնական սեփականությունը.
- Ձեր մեքենան(երը).
- Այն միջոցները, որոնք դուք հեշտությամբ չեք կարող վերածել կանխիկ դրամի, ինչպիսիք են. ոսկերչական իրերը կամ տան կահավորանքը.
- Այն գույքը, որը ձեզ անհրաժեշտ է տնտեսական ինքնուրույնության համար, ինչպես օրինակ. վարձակալած սեփականությունը կամ այն հողը, որը դուք օգտագործում եք տնային սպառման համար բերք աճեցնելու նպատակով.
- Ձեր տնտեսական ինքնուրույնության համար էական նշանակություն ունեցող ոչ առևտրային գույքը.
- Գերեզմանատեղերը.
- Կյանքի ապահովագրերը.
- Տոկոսները, որոնք դուք ստանում եք այն գումարի վրա, որը նախատեսում եք օգտագործել թաղման ծախսերի համար.
- Ձեր կողմից պահվող որոշ այլ գումարներ հաշվի չեն առնվում ինը ամսվա ընթացքում՝ օրինակ.
 - Սոցիալական ապահովության կամ Լրացուցիչ սոցիալական եկամուտի (SSI) հետադարձ ուժ ունեցող վճարները.
 - Բնակարանային օգնությունը.
 - Դաշնային եկամտահարկի վերադարձը և վաստակած եկամտահարկի վարկային կանխավճարները և երեխայի հարկային վարկերը.
 - Որպես հանցագործության զոհ ձեր կողմից ստացված փոխհատուցումը. և օ
 - Նահանգային կամ տեղական կառավարությունից ստացված տեղափոխման հետ կապված օգնությունը:

Այլ բացառությունների մասին տեղեկատվության համար դուք պետք է դիմեք Սոցիալական ապահովությանը:

Ի՞նչ է եկամուտի սահմանը:

Հավելյալ օգնության պահանջներին բավարարելու համար ձեր տարեկան եկամուտը պետք է սահմանափակվի \$16.245 դոլարով՝ անհատի համար (\$21.855 դոլարով՝ միասին ապրող ամուսնացած զույգի համար):

Նույնիսկ եթե ձեր տարեկան եկամուտը ավելի բարձր է, դուք դեռևս կարող եք հնարավորություն ունենալ ստանալու որոշակի օգնություն: Որոշակի օրինակներ, որտեղ ձեր եկամուտը կարող է ավելի մեծ լինել, ընդգրկում են այն դեպքերը, եթե դուք կամ ձեր կինը (ամուսինը).

- Օգնում եք ձեզ հետ ապրող նտանիքի այլ անդամներին.
- Ունեք աշխատանքից առաջացող հասույթ. կամ
- Ապրում եք Ալասկայում կամ Հավայան կղզիներում:

Ի՞նչը հաշվի չի առնվում որպես եկամուտ:

Ոչ բոլոր կանխիկ վճարումները համարվում են եկամուտ: Օրինակ, **Սոցիալական ապահովության կողմից հաշվի չեն առնվի.**

- Օգնությունը պարենային կտրոնների տեսքով.
- Օգնությունը տան էներգամատակարարման տեսքով.
- Օգնությունը բժշկական սպասարկման և դեղերի տեսքով.
- Բնակարանային օգնությունը.
- Օգնությունը արտակարգ իրավիճակներում.
- Վաստակած եկամտահարկի վարկային վճարումները.
- Տնտեսական վերականգնման վճարումներ.
- Օգնություն այլ անձանցից՝ ձեր տնային տնտեսության ծախսերը հոգալու համար.
- Չոհեթին տրամադրվող փոխհատուցումը.
- Կրթաթոշակները և կրթական դրամաշնորհները:

Ծանուցում. Սկսած 2010թ.-ի հունվարի 1-ից ավելի շատ Medicare-ի նպաստառուներ կարող են բավարարել Հավելյալ օգնության պահանջներին, քանի որ որոշ իրեր այլևս հաշվի չեն առնվում որպես միջոցներ և եկամուտ: Մեր կողմից որպես միջոց այլևս հաշվի չի առնվելու որևէ կյանքի ապահովագիր, ինչպես նաև մենք այլևս որպես եկամուտ հաշվի չենք առնելու այն օգնությունը, որը դուք կանոնավոր կարգով ստանում եք այլ անձից՝ ձեր տնային տնտեսության հետ կապված ծախսերը հոգալու համար՝ սնունդ, հիպոթեկ, վարձավճար, ջեռուցման վառելիք կամ գազ, էլեկտրականություն, ջուր և գույքահարկեր:

Կարո՞ղ եմ նահանգային գործակալությունները օգնել Medicare-ի հետ կապված իմ ծախսերի հարցում:

Սկսած 2010թ.-ի հունվարի 1-ից՝ Հավելյալ օգնության համար ձեր դիմում-հայտարարագիրը մուտքագրելիս, դուք նաև կարող եք սկսել Medicare-ի այլ գների հետ կապված օգնություն տրամադրող՝ Medicare-ի խնայողությունների ծրագրերի համար ձեր դիմելու գործընթացը: Սոցիալական ապահովությունը ձեր նահանգին ուղարկելու է տեղեկատվություն Հավելյալ օգնության դիմում-հայտարարագրի վերաբերյալ՝

եթե դուք չմիղեք մեզ դա չանելու խնդրանքով: Ձեր նահանգը կապ է հաստատելու ձեզ հետ՝ Medicare-ի խնայողությունների ծրագրի համար դիմելու հարցում ձեր օգնելու նպատակով:

Ես ինչպե՞ս կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկատվություն:

Դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի պլանի գներով Հավելյալ օգնություն ստանալու մասին լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք www.socialsecurity.gov/extrahelp վեբ կայքը կամ զանգահարեք Սոցիալական ապահովությանը՝ **1-800-772-1213 (TTY 1-800-325-0778)** հեռախոսահամարով:

Դուք կարող եք դիմել Հավելյալ օգնության համար առցանց՝ www.socialsecurity.gov/extrahelp վեբ կայքում; զանգահարել **1-800-772-1213 (TTY 1-800-325-0778)** և **պատվիրել հեռախոսով կամ խնդրել, որ դիմում-հայտարարագիրը ուղարկվի փոստով կամ էլ՝ դիմել Սոցիալական ապահովության ձեր տեղական գրասենյակում:** Սոցիալական ապահովության ներկայացուցիչները պատրաստ են օգնել ձեզ ձեր դիմում-հայտարարագիրը լրացնելու հարցում:

Եթե ձեզ պահանջվի տեղեկատվություն Medicare-ի խնայողությունների ծրագրի, դեղատոմսով բաց թողնվող դեղերի վերաբերյալ Medicare-ի պլանների, պլանում ընդգրկվելու կարգի մասին կամ «Medicare-ը և դուք» ձեռնարկի օրինակ խնդրելու համար, խնդրվում է այլելել www.medicare.gov վեբ կայքը կամ զանգահարել **1-800-MEDICARE (1-800-633-4227; TTY 1-877-486-2048)** հեռախոսահամարով: Չանգահարելիս, դուք կարող եք դիմել ձեր Առողջության ապահովագրության օգնության նահանգային ծրագրի (SHIP) հետ կապ հաստատելու մասին տեղեկատվություն ստանալու խնդրանքով: Ձեր SHIP-ը կարող է օգնել ձեզ Medicare-ի դեղատոմսով բաց թողնվող դեղերի պլանների հարցում: Ձեր տեղական SHIP-ի հետ կապ հաստատելու տեղեկատվությունը դուք կարող եք գտնել նաև ձեր Medicare-ի ձեռնարկում կամ ստանալ տեղեկատվություն առցանց՝ <http://www.medicare.gov/contacts/organization-search-criteria.aspx> վեբ կայքում:

